

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

**I. Ընդհանուր դրույթներ**

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի (**այսուհետ՝ Երիտասարդական խորհուրդ**) կանոնակարգը (**այսուհետ՝ Կանոնակարգ**) սահմանում է Երիտասարդական խորհրդի գործունեության կարգը:

2. Երիտասարդական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության, դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի և սույն Կանոնակարգի դրույթներին համապատասխան:

3. Կանոնակարգի իմաստով երիտասարդ փաստաբան է համարվում՝

- 1) ոչ ավել քան երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը, անկախ տարիքից,
- 2) մինչև երեսուն տարեկան փաստաբանը, անկախ փաստաբանական ստաժից:

**II. Երիտասարդական խորհրդի նպատակը**

4. Երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի նպատակն է՝

1) աջակցել երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին,

2) վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը,

3) նպաստել Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը, Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ),

4) կապեր հաստատել այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ:

### **III. Երիտասարդական խորհրդի կառուցվածքը**

5. Երիտասարդական խորհուրդը կազմված է նախագահից և վեց անդամից:

6. Երիտասարդական խորհրդի նախագահին և անդամներին նշանակում է Պալատի նախագահը:

7. Երիտասարդական խորհրդի նախագահ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, որի արտոնագիրը կասեցված չէ:

8. Երիտասարդական խորհրդի նախագահի լիազորությունների ժամկետ է սահմանվում մինչև լիազորությունների ստանձնման տարվան հաջորդող երկրորդ տարվա դեկտեմբերի 31-ը:

9. Երիտասարդական խորհրդի անդամի լիազորությունները ժամկետը լրանալու հիմքով դադարելու դեպքում Պալատի նախագահը Երիտասարդական խորհրդի նոր անդամ է նշանակում ժամկետի վերջին օրն ընդգրկող օրացույցային տարվա ընթացքում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած փաստաբանների կազմից: Երիտասարդական խորհրդի նոր նշանակված անդամի լիազորությունների ժամկետ է սահմանվում մինչև լիազորությունների ստանձնման տարվան հաջորդող երկրորդ տարվա դեկտեմբերի 31-ը:

10. Երիտասարդական խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում Պալատի նախագահը նշանակում է Երիտասարդական խորհրդի նոր անդամ՝ լիազորությունները դադարած անդամի հետ նույն օրացույցային տարվա ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից: Նոր նշանակված անդամի լիազորությունների ժամկետ է սահմանվում լիազորությունները դադարած անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով: Եթե խորհրդի անդամի լիազորությունները դադարում կամ դադարեցվում է լիազորությունների ժամկետի ավարտին վեց ամսից պակաս մնալու պայմաններում, ապա խորհրդի նոր անդամ նշանակվում է տվյալ օրացույցային տարում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից՝ մինչև տվյալ օրացույցային տարվան հաջորդող երրորդ տարվա դեկտեմբերի 31-ը լիազորությունների ժամկետով:

11. Պալատի նախագահի տեղակալի պատճառաբանված առաջարկությամբ, բացառիկ դեպքերում, Պալատի նախագահը կարող է Կանոնակարգի 9-րդ և 10-րդ կետերը լրիվ կամ մասնակի չկիրառել՝ նշանակելով այլ երիտասարդ փաստաբանների:

### **IV. Երիտասարդական խորհրդի գործունեության կազմակերպումը**

12. Երիտասարդական խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրում և նախագահում է Երիտասարդական խորհրդի նախագահը՝ իր կողմից հաստատված օրակարգով: Նիստերը կարող են հրավիրվել նաև Երիտասարդական խորհրդի անդամների կամ Պալատի նախագահի տեղակալի նախաձեռնությամբ՝ նրանց կողմից առաջարկվող օրակարգով:

13. Երիտասարդական խորհրդի նախագահի բացակայության դեպքում Երիտասարդական խորհրդի նիստը նախագահում է ավելի վաղ փաստաբանական արտոնագիր ստացած Երիտասարդական խորհրդի անդամը:

14. Երիտասարդական խորհրդի նիստի օրակարգի, նիստի տեղի, օրվա ու ժամի մասին ծանուցումն ուղարկվում է ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից մեկ օր առաջ: Ծանուցումը կատարվում է էլեկտրոնային փոստով հաղորդագրություն ուղարկելու կամ սոցիալական ցանցի համապատասխան խմբում հաղորդում տեղադրելու միջոցով: Առցանց նիստ հրավիրելու դեպքում ծանուցման մեջ նշվում է օրակարգը, նիստի օրը և քվեարկության ավարտի ժամը:

15. Երիտասարդական խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Երիտասարդական խորհրդի անդամներից առնվազն երեքը և Երիտասարդական խորհրդի նախագահը (1), կամ Երիտասարդական խորհրդի առնվազն չորս անդամ (2):

16. Երիտասարդական խորհրդի որոշումները կայացվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում Երիտասարդական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

17. Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության մասնակիցներն իրենց դիրքորոշումն արտահայտում են քվեարկելով «կողմ», «դեմ» կամ «ձեռնպահ»:

18. Երիտասարդական խորհրդի նախագահը հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ տրված ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում դեմ ու ձեռնպահ ձայների թիվը: Առցանց քվեարկության դեպքում Երիտասարդական խորհրդի նախագահը քվեարկության ավարտից հետո ամփոփում է արդյունքները և այդ մասին տեղեկացնում է Երիտասարդական խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով հաղորդագրություն ուղարկելու կամ սոցիալական ցանցի համապատասխան խմբում հաղորդում տեղադրելու միջոցով:

19. Քվեարկության արդյունքներն արտացոլվում են Երիտասարդական խորհրդի նիստի արձանագրության մեջ: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում: Երիտասարդական խորհրդի նիստերի արձանագրումը կազմակերպվում է Երիտասարդական խորհրդի նախագահի կողմից: Երիտասարդական խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում է Երիտասարդական խորհրդի նախագահը:

20. Երիտասարդական խորհրդի կողմից ընդունված որոշումները կարող են կազմվել առանձին ակտի (որոշման) ձևով: Առանձին ակտի ձևով կայացված Երիտասարդական խորհրդի որոշումը ստորագրում է Երիտասարդական խորհրդի նախագահը:

21. Երիտասարդական խորհուրդը Պալատի նախագահի առաջարկությամբ կարող է մասնակցել Պալատում կամ «Փաստաբանական դպրոց» հիմնադրամում իրականացվող միջոցառումներին:

22. Երիտասարդական խորհուրդն իր որոշումներով հաստատում է եզրակացություններ, առաջարկություններ կամ ուղերձներ:

23. Երիտասարդական խորհուրդը Պալատի նախագահի որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով կարող է ընդունել այլ որոշումներ:

24. Երիտասարդական խորհրդի որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

25. Երիտասարդական խորհրդի գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցվում են Պալատի բյուջեից՝ ֆինանսական տնօրենի հետ նախապես ծախսերը համաձայնեցնելու պայմանով:

26. Երիտասարդական խորհրդի աշխատանքները համակարգում և կազմակերպում է Պալատի նախագահի տեղակալը:

#### **V. Երիտասարդական խորհրդի նախագահի և անդամների լիազորությունների դադարեցման կարգը**

27. Երիտասարդական խորհրդի նախագահի կամ անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել Պալատի նախագահի նախաձեռնությամբ, Երիտասարդական խորհրդի նախագահի կամ անդամի փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու, ինչպես նաև Երիտասարդական խորհրդի նախագահի կամ անդամի կողմից այդ մասին Պալատի նախագահին գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:

28. Երիտասարդական խորհրդի նախագահի կամ անդամի լիազորությունները համարվում են դադարած Պալատի նախագահի որոշման կայացման պահից, իսկ սույն Կանոնակարգի 26-րդ կետում նշված դեպքում՝ դիմում ներկայացնելու հաջորդ օրվանից:

#### **VI. Եզրափակիչ դրույթներ**

29. Սույն Կանոնակարգի նախորդ խմբագրությունների հիման վրա միաժամանակ և նույն ժամկետով նշանակման կանոններով ձևավորված Երիտասարդական խորհրդի լիազորությունների ժամկետն ավարտվելուց հետո վեց ամսվա ընթացքում, Պալատի նախագահը նշանակում է՝

ա) Երիտասարդական խորհրդի նոր նախագահի՝ մինչև տվյալ օրացույցային տարվան հաջորդող երկրորդ տարվա դեկտեմբերի 31-ը ժամկետով,

բ) Երիտասարդական խորհրդի երկու նոր անդամի՝ նշանակմանը նախորդող երկրորդ օրացույցային տարվա ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից՝ մինչև տվյալ տարվան հաջորդող օրացույցային տարվա դեկտեմբերի 31-ը լիազորությունների ժամկետով,

գ) Երիտասարդական խորհրդի երկու նոր անդամի՝ նշանակմանը նախորդող օրացույցային տարվա ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից՝ մինչև տվյալ տարվան հաջորդող երկրորդ օրացույցային տարվա դեկտեմբերի 31-ը լիազորությունների ժամկետով:

Երիտասարդական խորհրդի ևս երկու նոր անդամի Պալատի նախագահը նշանակում է մինչև օրացույցային տարվա ավարտը տվյալ օրացույցային տարվա ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից՝ մինչև տվյալ տարվան հաջորդող երրորդ օրացույցային տարվա դեկտեմբերի 31-ը լիազորությունների ժամկետով:

30. Սույն կանոնակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Պալատի նախագահի որոշմամբ: